

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՈՐԷՆ-ԽՄԻՐԱԴԻՐ

ՋԱՐՄԱՅԻ ՔԱՂԱՆԱՅ ԿԵՋԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 7 ՕԳՈՍՏՈՍ 1910

ԹԻՒ 19

“ՏԱՃԱՐ”, Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրու
Գաւառաց համար տարեկան	40 »
Արտասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Ջարմայր Բահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեփրաւ, Հայոց եկեղեցի

درسماعادته بشکطاشده ارمنى کليسا سنده (داجار) غزته سى مدیری باباس زارمار

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐԶՈՒՄԱՆ
Ջարմարճըլար, Յակոբեան իւան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմբարեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսերճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէզլուրեան

ՎԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսերճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բնյ. Պալըզեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյազեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Դէորդ Բնյ. Անանեան
8. Տ. Դրիգոր Բնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«Տ Ա Ճ Ա Ր» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱԴՐԻԱՆՈՒՊՈՒՄ.—Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍՍԵՂԻՐԻԱ.—Տ. Ռուբէն Բնյ. Գալէմբարեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պօղոս Վրդ. Գալէմբարեան
ԱՅՆԻՍԿ.—Տ. Գարեգին Բնյ. Պողարեան
ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Խաչատուր Ա. Բնյ. Տօնէիեան
ԲԱԲԵՐԴ.—Մ. Սանտեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բաբգէն Ծ. Վրդ. Կիւլէսեան
ԳԱՀԻՐԷ.—Առաջնորդ Տ. Մկրտիչ Ծ. Վրդ. Աղաւաղեան
ԵՂԵՍԻԱ.—Բ. Թիւրաքեան էֆ.
ԵՕՁՂԱՏ.—Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ. Դերձակեան
ԵՐՁՆԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ. Փէրտանճեան
ԶՄԻՒՆԻՐ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ. Սարգիսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Գալուստ Բնյ. Տ. Գալուստեան
ԽԱՐԲԵՐԴ.—Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ Ծ. Վրդ. Ասլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Ծ. Վրդ. Սաւաթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մաթոս էֆ. Թոքատեան
ԿԻՒՄԻՒԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշանեան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ Վրդ. Գաւապեան
ՄԱՆՁԷՍԹԸՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ա. Եպիսկ. Իւթիւճեան
ՄԱՐՍԸ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժապետեան
ՄԱՐԶՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան

ՆՈՐ ԶՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բաղարատ Վրդ. Վարդապետեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Նաթան Բնյ. Տառեան
ՈՒՇԱՔ.—Կարապետ էֆ. Քէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ.—ՊԱԼԸՔԵՍԻՐ.—Առաջնորդ Տ. Կարապետ Ծ. Վրդ. Մաղլըմեան
ՊԱՂԱՍՏ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ա. Եպիսկ. Կէօմրիւքեան
ՊԱՅՐԱ.—Կարապետ էֆ. Քէրթմէնեան
ՊԱՐՏԻՉԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կարապետեան
ՊԷՅՐՈՒԹ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Եղեկիւ Վրդ.
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ա. Եպիսկ. Արշարունի
ՌՈՒՍՃՈՒՔ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըրճեան
ՌՈՏԱՍԹ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բարթոլ Ա. Բնյ. Թագմճեան
ՍԱՄՍՕՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ. Օտապաշեան
ՍԵԲԱՍՏԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Թէոփիլէ Բնյ. Օտապաշեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարապետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՅԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպեան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիոնիսիոս Բնյ. Տրէզեան
ՏԷՏԷ-ԱՂԱՃ.—Տ. Գարեգին Բնյ. Տէօմէթեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէսեան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻՉ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառդապետ Բնյ. Քիպարեան
ՔԷՍՍԹԷՆՃԷ.—Տ. Մատթէոս Բնյ. Մանիկեան
ՔՂԻ.—Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդ.
ՅԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՅԻԷՉՆՕ.—Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԲԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՏԱՐԱԹ, 7 ՕԳՈՍՏՈՍ 1910

ԹԻԻ 19

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — ԽՄԲԱԳՐԱԿԱՆ, «Վերանորոգում»ը, ՋԱՐՄԱՅՐ ՔԱՅԱՆԱՅ. — ԵԿԵ-
ՂԵՑԱ-ԻՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ, Կանոնի ժողովոյն նիկիոյ, Ե. Ե. Դ. — Վերանորոգութիւն Հայ
եկեղեցւոյ, ՎԱՐԴԱՆ ՔԶ. ԱՍԼԱՆԵԱՆ. — ԲՆԱԽՕՍԱ-ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ, Վիշաք, (Ա), ԼԵՒՈՆ
ԳԱՐԱԿԵՕՋԵԱՆ. — Պատմ. Հայ. Զայնագրութեան, ԱՐԻՍՏ. ՔԶ. ՇԻՍԱՐԼԵԱՆ. — Ո՛ւր էր . . . (քերթուած),
ԼՈՒՍՆԹԱԳ. — ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆԻՔԸ, Շարժուան կարեւոր լուրեր եւ ժողովոց որոշումներ :

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»Ը

Հրագրական հրատարակութիւն-
ներ, ամէն գոյնէ եւ ամէն նկարա-
դիրէ թերթերու մէջ, երկար ժամա-
նակէ ի վեր կը զգացնեն պէտք մը,
Հայ եկեղեցւոյ վերանորոգումը, որ
հետզհետէ անհրաժեշտ, ստիպողա-
կան կը դառնայ :

Այդ հրատարակութեանց մէջ Տա-
նաւ ունեցաւ՝ կարծենք՝ ուրոյն եւ նը-
շանակելի դեր մը, հրատարակելով
կարգ մը յօդուածներ, մէջտեղ դնե-
լով այնպիսի պահանջներ, որոնց
հարկեցուցիչ հանգամանքին կարելի
է պարակարծիք գտնուիլ, բայց ա-
նոնք կը ցոլացնեն շատ որոշ իրողու-

թիւն մը, որ միութարական պէտք է
նկատուի հայ ժողովուրդին համար :
Այդ հրատարակութիւնները միանգամ
ընդ միշտ կը ցուցնեն ժողովուրդին
թէ՛ Հայ եկեղեցականութեան ամէ-
նէն խոնարհ, աննշմար մնացած եւ
դատաւեալուած (յաճախ յանդիման) մասը,
Հայ Բաժնայութիւնը, ամէ-
նէն աւելի փափաքող է եկեղեցին իր
ծիսական եւ տրուողական կողմերովը
զտուած, մաքրուած տեսնելու, եկե-
ղեցին տեսնելու իր բարձրութեան
մէջ, ընելու առաջին դարերու այն
խոհալ Հաստատութիւնը, որ հզօրա-
պէս կ'ազդէր միտքերու, սիրտերու եւ
հոգիներու վրայ :

Տ. Վարդան քհն. Ասլանեանի յօդ-
ուածներու շարքը, որ կը շարունակ-
ուի այսօր եւ իր յաջորդներն ալ պի-
տի ունենայ անշուշտ, ցնցող տպաւո-

րութիւն մը թողելու բնոյթն ունի⁽¹⁾։ Անոր և ուրիշ եկեղեցական թէ աշխարհական յօդուածագիրներու պահանջներուն մէկ ցողացումն էր Տ. Գնէլ Ծ. Վ.ի առ կրօն. Պատկ. Ժողովն մատուցած յիշատակագիրը՝ Հայ եկեղեցւոյ ծիսական բարեկարգութեանց վրայ, զոր փութացին ստորագրել կրօն. Ժողովոյ քահանայ անդամներն ևս, և որուն վրայ աւելցուց Գնալըի պատուական քահանան՝ Տ. Վահան Խոյեան՝ ուրիշ կարգ մը պահանջումներ որ այլապէս չահեկան, ստիպողական են, անով մանաւանդ որ ընկերային բնոյթ ունին առաւելապէս, ծիսական մանրամասնութիւններէ անջատարար, և կը ձգտին աւելի հիմնական դարմանի մը, Հայ եկեղեցւոյ ճշմարիտ, նորոգ կազմակերպութեան, յօգուտ և ի շահ ժողովրդեան, սրուն համար քարոզած է Տէրն մեր Յիսուս Քրիստոս, սիրոյ և գթութեան իր աստուածային վարդապետութիւնները։

Տ. Գնէլ Ծ. Վ.ի յիշատակագիրն իր ամբողջութեամբ ծանօթ է Տաճարի ընթերցողներուն⁽²⁾։ Հարկ է ներկայացնել Տ. Վահան քհ. Խոյեանի առաջարկներն ևս, որ մասամբ միայն հաղորդուած էին անցեալ շաբթու կրօն. Ժողովոյ որոշմանց շարքին մէջ։ Ասոնք են.—

Ա. Ամուսնութենէ առաջ երկուստեք բժշկական վկայական պահանջել։

(1) Այդ յօդուածներով մեջեղ անուած պահանջներու բոլորի՛ն աշխատակարծիք չենք, եւ ունիմք մեր քսեղիքները ասոնցմէ ոմանց մասին։ Բայց իր ամբողջութեան մէջ շնորհաւորելի է Տէր Հայրը՝ որ կ'ուզէ գիտակից շարժում մը ծնցնել բողոքած հոգեւորականութեան մէջ։

(2) Տես թիւ ԺԷ. Յունիս 24։

Բ. Ժիւղահամարի, հասի չհասի որոշ կանոններ և օրէնք սահմանել։

Գ. Ամուսնալուծման զանազան պարագաները ճշտող բացորոշ օրէնք մը խմբագրել։

Դ. «Մեղայ Ամենասուրբ» զոյջումին ինչ ինչ մասերը յապաւել։

Ե. Ուսեալ քահանաներ հասցնելու համար թէ՛ աստ և թէ՛ մանաւանդ գաւառներու մէջ յարմարագոյն դատուած տեղեր ժառանգաւորաց դպրանոցներ հաստատել։ Առ այժմ Արմաշու դպրեվանքը սրամագրելի ընել, ամբողջ ընթացքը աւարտելու պայմանաւ։ Ոչ մի եպիսկոպոս առանց ստուգապէս հաստատուել վկայագրի չկրնայ ու է ձեռնադրութիւն ընել։

Զ. Քահանայից նիւթականի բարելաւման համար ըստ աստիճանի և ըստ պիտոյից ամսաթիւակի դիւթիւնը որդեգրել։

Է. Կուսակրօնութիւնը պարտաւորիչ չընել, ձեռնադրուողին ազատ կամքին թողուլ։ «Որ կ'ծրողն է տանիլ տարցի»։

Ը. Ըստ Մաշտոցի պաշտօնաւճի 30 տարեկանէ վար ձեռնադրութիւն չկատարել։

Թ. Երիտասարդ այրիացեալ քահանաները կա՛մ ամուսնացնել կա՛մ վանք մը փոխադրել։

Ժ. Կուսակրօններու ներելի չըլլայ իրենց ազգականութիւններէ զատ ուրիշներու հետ ինակիլ, որոնք ու է ազգականական կապ չունին։

♦♦

Կրօն. Պատկ. Ժողովին մատուցուած կրկին առաջարկներուն մէջ, ըստ մեզ կան կէտեր որ եկեղեցական համագգային Ժողովի մը, —նոյն իսկ Համագումարի մը— մէջ վիճաբանութեան չեն կարօտիր՝ ընդունուելու և գործադրուելու համար։ Այսպէս, «Մեղայ Ամենասուրբ» զոյջումին ինչ ինչ մասերու յապաւումը արդէն գործադրած է հոգեւոյս Տ. Յովհ. Աւագ քհ. Մկրեան իր հրատարակած աշխ. Ժամագրքին մէջ։ Նոյնպէս քարոզած եւ ճառեր և խրատականներ տեղ տեղ կարող և ձեռնհաս ու...

ձեռներէց եկեղեցականներ արդէն իսկ աշխարհաբար կը կարգան, ի հոգեւոր շինութիւն բարեպաշտ ժողովրդեան. կը մնայ զայդ ընդհանրացնել: Ոչ մէկ հոգեւոր իշխանութիւն կ'այպանէ նաեւ եկեղեցւոյ լուսարարապետ մը՝ եթէ շատ պարզ զարգարանք մը տայ սեղանին, և չշուայէ բազմութիւ մոմեղէններ, ոսկեայ, արծաթեայ զարդեր ևն.: Խաչ մը և Աւետարան մը. ահա՛ կարեւորը: Ուսուցիչներ՝ իրենւ խորհրդանիշը սիրոյ կրօնքին վսեմ, գերագոյն սկզբունքին՝ անձնագոհութեան, և երկրորդը՝ ամփոփումը աստուածային, յաւիտեանական ճշմարտութեանց:

Ատոնցմէ դուրս կան առաջարկներ, որ թէև բանաւոր, բայց ստիպողական չեն, ոչ ալ հիմնական անպատեհութիւն մը կը կազմեն: Ատոնց կարգէն կրնանք նկատել օտար անձանց սուրբերու յիշատակութեան յապաւումի, մկրտութեան, ձեռնադրութեան, մեռելական արարողութեանց կրճատումը, ևն.: Ասոնք բոլորն ալ նկատողութեան արժանի խնդիրներ են, բայց կրնան քիչ մը ետքի թողուիլ անվնաս, խորհելու համար աւելի կարեւոր, աւելի հիմնական, աւելի ստիպողական խնդրոց վրայ:

Ժողովուրդը եկեղեցիէն հեռացած է ու կը հեռանայ, ոչ թէ որովհետեւ սեղանին վրայ շատ սոմեր կը վառին, կամ օտար, անձանց սուրբի մը յիշատակութիւնը կ'ըլլայ, այլ որովհետեւ այնտեղ չի գտներ իր հոգեկան, իմացական պէտքերուն գոհացումը, չի տեսներ քարոզիչ մը, որ իրեն խօսի այն շինիչ և հիւսիշ

քարոզներէն որոնք բարերար ազդեցութիւն մը կ'ունենան մարդու վրայ. չի գտներ այնտեղ մէկը որ ճանչնայ իր ցաւերը, իր պէտքերը, իր հոգեկան ու մարմնական տագնապները, իր մտքի վրդովումները, և այդ ցաւերուն ու տագնապներուն սփոփանք, և մտքի այդ վրդովումներուն գոհացում տայ: Ժողովուրդը եկեղեցի չերթար, որովհետեւ կը տեսնէ այնտեղ պաշտօնեաներ որ հաւատքը չունին իրենց ստանձնած պաշտօնին նուիրականութեան, որ գիտակցութիւնը չունին իրենց ամենաբարձր գերին, որոնք՝ մանաւանդ՝ զարգացումով աւելի վար են իրմէ (Ժողովուրդէն), մինչ պէտք է անոնք շատ վեր ըլլային, քանի որ զիրենք առաջնորդելու կոչուած են: Ժողովուրդը չերթար եկեղեցի, նաեւ անոր համար որ նուիրական Բեմին վրայ, նուիրականացած տարազի մը մէջ, կը տեսնէ երբեմն այն տեսակ եկեղեցականներ, որոնց անհատական կեանքը գայթակղութեանց շարունակութիւն մըն է, կամ եղած է երբեմն:

Ահա բարենորոգման կարօտ առաջին կէտը.— Հայ եկեղեցականութեան բարձրացումը՝ մօտաւորապէս և քառոյսապէս: Տ. Վահան քհ. Խոյեան մատը բուն վէրքին վրայ դրած է իր վերջին առաջարկներով (Ե.էն Ժ.):

Յորչափ մեր քահանաները՝ ստուար մեծամասնութեամբ՝ ընտրուին գործէ դադարած դարբիններէ կամ սրճարաններէ, կամ շատ շատ քիչ մը քաղցրածայն լուսարարներէ, ցորչափ եպիսկոպոսները ձեռք դնեն արժանաւորին թէ անարժանին վրայ հաւատարապէս, ցորչափ մեր եկեղեցա-

կաններէ ոմանք, — ամուսնացեալ, բայց մանաւանդ ամուսին, — չարունակեն անհատական գայթակղալից կեանք մը ունենալ, և ցորչափ Հայ եկեղեցիի Բեմը չունենայ իրեն արժանաւոր ներկայացուցիչները, ցորչափ Աստուծոյ տաճարներուն մէջ չգոռայ ժողովուրդին կեանքովն ապրող, ժողովուրդին տառապանքին մասնակից ճշմարիտ հայրերու սրտապնդող ձայնը, եկեղեցին չի լինար հաւատացեալներու բազմութեամբ, եկեղեցին չըլլար եկեղեցի, որ նոյնինքն հաւատացեալներու ամբողջական հաւաքումն է :

Եւ տակաւին կայ եկեղեցիին ընկերային դերը, բնականական կեանքի ամբապնդման համար ունենալիք հըզօր ներգործութիւնը : Տ. Վահան քհնյի առաջին երեք առաջարկներն այդ ամենակարեւոր հարցը կը շոշափեն : Քահանաները ամէնէն աւելի գիտեն թէ ժողովուրդը ո՞րքան կը տուժէ ամուսնական, հասի չհասի, նաև ամուսնալուծման զանազան պարագաներու համար բացորոշ օրէնքի մը չգոյութենէն, որով ճիշտ միեւնոյն պարագային մէջ գտնուողներու նկատմամբ կը պատահի որ բոլորովին տարբեր կարգադրութիւններ ըլլան, ինչ որ խորապէս կ'ազդէ ժողովուրդին վրայ, կը խախտէ անոր հաւատքը՝ եկեղեցիի օրէնքներուն արդարութեան վրայ, կ'ոչնչացնէ եկեղեցիին հեղինակութիւնը, և տագնապի կը մատնէ ժողովուրդային պահանջումներու և Ազգ. իշխանութեան կամայական խտուրթեանց միջեւ տարուբերող խեղճ քահանաներ (*) :

(*) Այդպիսիներու ուշագրաւ մէկ թիւաբոլ կը ներկայացնէր ողբացեալ Արփիար Արփիարեանի

Պէտք է ամենէն առաջ լուրջ ու շարունակեալ առնել նմանօրինակ շատ կարեւոր պահանջներ :

Ըսելիքներ ունինք տակաւին :

ԶԱՐՄԱՅՐ ՔԱՆԱՆԱՅ

ԵԿԵՂԵՑԱ-ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ

ԿԱՆՈՆՔ ԺՈՂՈՎՈՅՆ ՆԻԿԻՈՅ

(ՅԱՄԻՆ 325)

11. — Որք յանգեանն առանց բռնադատութեան կամ գրաւման ստացուածոց կամ առանց վտանգաց կամ ա՛յնպիսի ինչ իրաց, որ դէպ եղեն առ բռնաւորութեամբ Լիկինիոսի, կա՛մ եղեւ ժողովոյն՝ քաղցրանալ առ նոսա եթէ իցին իսկ անարժանք մարդասիրութեան : Որք ճշմարիտ ապաշխարողք են՝ ամա երկա ընդ ունկընդիրս կացցեն հաւատացեալս (*) (οἱ πιστοὶ) և եօթն ամ գետնատարած լիցին (առ դրանն կացցեն), և երկու ամ առանց ընծայս (պատարագիք) մատուցանելոյ՝ հաւասարեացին աղօթից ժողովրդեան :

12. — Վասն այնոցիկ որ ի շնորհաց կուլեցեալք և եռանդն ցուցեալ զառաջինն՝ ապա լուծին զգօտիս, և ապա՝ իբրեւ զշունս որ դառնան ի փոխածս իւրեանց, զարծաթ ի կիր առեալ և ընծայեք միւս անգամ հասանեն ի պաշտօն զինուորութեանն, այնպիսիք կացցեն երեք ամ ընդ ունկընդիրս և տասն ամ առ դրան կացցեն : Յետ այսր ամենայնի՝ արժան է քրն-

«Սիմոնական Տէրտեր», որուն մէջ ընթերցողին ուշադրութիւնը գրաւած պէտք է ըլլան երկու կէտեր. — Առաջին՝ Տ. Վարդանի ներքին պայտքը՝ իր խղճին եւ Աւետարանի ճշմարիտ ոգիին հետեւելու, քի իբրեւ կրօնի ստորադասեալ պաշտօնեայ մը՝ նուիրապետական օրէնքներով իր վրայ իշխողներուն հնազանդելու համար, եւ երկրորդ անոր դասափետուիչը ազգային «առաջնակարգ» յազմի գը՝ իբրեւ սիմոնական, պարզապէս իր խղճի ձայնին հետեւելուն համար :

(*) Այսինքն՝ որոնք արդէն մկրտուած են :

նել զմիտս նոցա և զհանգամանս ապաշխարութեանն: Որք միանգամ երկիւղիւ և արտասուօք և զղջմամբ և բարբի զործովք զդարձ իւրեանց արդեամբք և ո՛չ ի վերին երեսս ցոլցանեն, յետ ընդ ըզսահմանեալ ժամանակ ունինորութեանն հաւաստիւսցին աղօթից, թէ հաճեսցի հպիսկոպոսն և մարդասիրութիւն առ նոսա ցոլցանել կամիցի: Իսկ որ յանհոգս կրեն զպատիժն (չմտանելոյ յեկեղեցի), և համարին զի այն բաւական լիցի ի թողութիւն մեղաց, ամենեւեմբ լցցեն զկարգեալ ժամանակն:

13.—Վասն այնոցիկ որ հրաժարին յաշխարհէ՝ նախնին և կանոնականն օրէնք պահեալ են և այժմ, որպէսզի եթէ ոք ի մեռանել կացցէ, մի՛ զրկեսցի և յետին և ի հարկաւոր թոշակէն: Եւ եթէ յետ անյոյսն լինելոյ (ἀπογοῶσθεις) և ի հաղորդութիւն մերձենալոյ՝ ի կենդանութիւն հաստատեսցի, կացցէ ընդ այնոսիկ՝ որ աղօթիցն հաւասարին միայն: Առ հասարակ սակայն որ մերձ են ի մահ և խնդրեն ճաշակել զնարմինն Տեղունական՝ հպիսկոպոսն յետ հարցափորձ առնելոյ՝ հաղորդ արացցէ զնոսա:

14.—Վասն հրախայից և անկեղծ կա՛մ եղեւ մեծի և սուրբ ժողովոյս զի երեք ամ ընդ սպաշխարողս (ունինգիրս) կացցեն յիսայն, և յետ այնորիկ ընդ երախայս հաւասարեսցին աղօթից:

15.—Վասն բազում յուզմանց և ամբոխից որ լինին՝ բարեօք՝ թուեցաւ ամենայն ուստեք բառնալ ի միջոյ զսովորութիւնն՝ որչ ընդդէմ կանոնի՝ գտանէ ի կողմանս ուրեք, որպէս զի մի՛ ի քաղաքէ յայլ քաղաք փոխեսցի հպիսկոպոս ոք կամ երէց կամ սարկաւագ: Եւ եթէ ոք յետ որոշման սրբոյ և մեծի ժողովոյս՝ յայնպիսի ինչ յանդգնեսցի կամ զսովորութիւնն զայն յանձին կալցի, անվաւեր լիցի զործն՝ և դարձցի յեկեղեցին՝ յորոյ վերոյ հպիսկոպոս կամ երէց օծեալ է:

16.—Որք խիզախութեամբ և ո՛չ գերկիւղն Աստուծոյ ստաջի աչաց ունելով և ո՛չ պատկառ կալով եկեղեցական կանոնաց հեռանայցին յեկեղեցոյ իւրեանց, եթէ երիցունք իցին կամ սարկաւագունք կամ յուխտէ ժառանգաւորաց, այնպիսիք ո՛չ

երբեք ընկալեալ լիցին յա՛յլ եկեղեցի, այլ հարկ ի վերայ կայ դարձուցանել զնոսա ի վիճակս (παροικία) իւրեանց. և եթէ յամուեսցին, արժան է մերժել զնոսա ի հաղորդութենէ: Եւ եթէ համարձակեսցի ոք յափշտակել զոր ոք ընդ ձեռամբ այլոյ և հպիսկոպոսի կայ, և զնա՝ սուանց հաւատութեան հպիսկոպոսին՝ յորմէ ժառանգաւորն այն խոյս տուեալ է՝ ձեռնադրեսցէ յիւրում սեպական եկեղեցւոյ՝ անվաւեր լիցի ձեռնադրութիւնն այն:

17.—Եւ զի բազումք որ ի կարգի են զհեղ լինին ազանութեան և զօջաքաղութեան՝ մոռացեալք զգիրն աստուածային որ տսէ. «Զարծաթ իւր ի վարձու (սուկոսեօք) ո՛չ տայ» (Սղմ. ԺԴ. 5) և փոխ տուեալ հարկաւորապատիկս պահանջեն, իրաւունս համարեցաւ սուրբ և մեծ ժողովն, զի՝ եթէ գտցի ոք՝ յետ այսր որոշման՝ որ առնուցու տոկոսիս հնարիւք իմն, կամ որո՛վ և իցէ օրինակաւ զհետ լիցի իրացն, կամ զկէսն պահանջելով և զաւելին, կամ ամենեւեմբ ա՛յլ ինչ իմասցէ վասն ամթալի շահուն, լուծցի ի կարգէն և ի կանոնն ջնջեսցի:

18.—Լուր թնաս ի սուրբ և ի մեծ ժողովս եթէ ի տեղիս ուրեք և ի քաղաքս՝ երիցանց զհաղորդութիւն սարկաւագունք տան, որպիսի ինչ ո՛չ կանոնք և ո՛չ սովորութիւնք ընկալան, զի որք չունին զիշխանութիւն (պատարագ) մատուցանելոյ՝ մատուցողացն տայցին զմարմին Բրիստոսի, և այս ևս ի ծանօթութիւն եկն, զի ոմանք ի սարկաւագաց յառաջ քան զհպիսկոպոսունս մասչին ի հաղորդութիւն: Այս ամենայն դադարեսցէ և սարկաւագունք ի չափու իւրեանց մնացին, գիտելով զի սպասաւորք (ἐπηρέτης) = հիւպերէտ են հպիսկոպոսի և քան զերիցունս խոնարհ են աստիճանաւ: Պա՛րտ է նոցա զհաղորդութիւն ըստ կարգի առնուլ յետ երիցանց, և հպիսկոպոսն կամ երէց տացէ նոցա զայն: Այլ և ոչ ի միջի երիցանց նստել օրէն է սարկաւագաց. զի այդ արտաքոյ կանոնի է և կարգի: Եթէ ոք ոչ կամիցի հնազանդել՝ յետ այսր հրամանի, դադարեսցի ի սարկաւագութենէ:

19.—Վասն այնոցիկ որ Պաւղինոս-
եանքն(*) են և ի կաթողիկէ եկեղեցի ա-
պաստան լինիցին՝ հրաման է զի վերստին
մկրտեսցին: Եթէ ոմանք ի նոցանէ յանց-
եալ ժամանակի ի կարգէ ժառանգաւորաց
էին (իբրեւ Պաւղինոսեանք), պարտ է
նոցա՝ յորժամ անդատապարտք և անա-
րատք երեւեսցին՝ յեպիսկոպոսէ կաթողի-
կէ եկեղեցւոյ՝ յետ կրկին մկրտութեանն՝
ընդունել զձեռնադրութիւն. իսկ եթէ
փորձն ցուցցէ զնոսա անարժան, պարտ է
լուծանել զնոսա ի կարգէն: Այսպէս
և վասն սարկաւազունեաց և վասն ամե-
նեցուն ի կարգի եղելոց նոյն կանոն (τύπος)
պահեսցի: Յիշեցուցանեմք և սարկաւա-
զունեաց՝ որ յայնմ տարադի են (σχημα=
սքեմ) և ձեռնադրութիւն ինչ ո՛չ ունին,
զի ընդ աշխարհականս դասեսցին ամե-
նեւիմք:

20.—Եւ քանզի ոմանք ի կիւրակէի
ծունր կրկնեն և ի պենտեկոստեան աւուրս,
հաճոյ թուեցաւ մեծի և սուրբ ժողովոյս՝
յոտին մատուցանել Աստուծոյ զաղօթս, զի
ամենայն ինչ նման լիցի ամենայն ուրեք:
Ե. Ե. Դ.

ՆՈՒՆԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ազն. Տորդ. Կ. Մութաֆեան էֆ. մէկ
տարեկան Տաճարի նուիրատուութիւն մը
ըրած է, խմբագրութեանս թողով ուղղել
ղրկուելիք տեղը: Կը յատկացնենք Ատա-
նայի Պաղչէ գաւառակի Խառնր գիւղի Տ.
Մովսէս քենյ. Տ. Յովհաննէսեանի, «հուրի
և սուրի տխուր մնացորդ վատարախտո-
ղովորեան մը հոգեկան արիփանք մը ըլլա-
լու համար», ինչպէս կը գրէ յիշեալ քա-
հանան, թերթի մը առաքման խնդրանք
ընող սրտառուչ նամակով մը:

* * Պատրիարքարանի պաշտօնեայ Ազն.
Նշան էֆ. Բոքաղեան մէկ տարեկան Տա-
ճար կը նուիրէ Բինկեանի աղգային վար-
ժարանին:

(*) Հայ ձեռագիրը ոմանք ունին Ապողիմարի
անունը փոխանակ Պաւղինոսեանց՝ որ Սամարուցի
Պողոսի հետեւողներն են:

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՐՐՈՐԴ ԹՕԴՈՒԱԾ(*)

ՍՈՒՐԲ ԳՐԲԻ ԽՆԴԻՐԸ

Է. դարուն Սիօն կաթողիկոս, Պար-
տաւի մէջ գումարած համադգային Սիւնհո-
գոսի մը մէջ կանոնաւոր էր Ս. Գիրքի կա-
նոնին խնդիրը, բայց հիմա հրատարակուած
ղանազան գրութիւններ կը հակասեն իրա-
րու. զոր օրինակ մինչդեռ Չահապեանի
տուած տեղեկութիւնով այդ ժողովը մինակ
Սիրաքի գիրքը անկանոն կը սեպէ, Կ. Վ.
Շահապեանի տեղեկութիւնով այդ ժո-
ղովը մինակ Եզրասը անկանոն կը սեպէ:
Իսկ Խորէն Նար պէյ, Կրթական Քրիս-
տոնէականի Բ. տպագրութեան մէջ՝ որ
1887ին հրատարակուեցաւ, կը պատմէ թէ
Պարտաւի Ս. ժողովին մէջ մինակ կանո-
նականները ճանչցուեցան կանոնին մէջ, և
երկրորդականները ամբողջովին դուրս ձգ-
ուեցան:

Արէլ արքեպիսկոպոս Մխիթարեան կը
հետեւի Չամչեանին, և այդ երեք տեղեկու-
թիւններուն մասին բան մը չի ճշտեր իր
«Պատմ. ժողովոյ Հայ Եկեղեցւոյ» հեղի-
նակութեան մէջ: Կարապետ վարդապետ
Շահապեանի կ'ըսէր. «Ես ինձմէ՛ այս ինչ
գիրքը ընդունելու և այն ինչը մերժելու
ձեռներէց ըլլալ չեմ ուզեր. այդ՝ եկեղեց-
ւոյ ծայրագոյն կատարութեան կը վե-
րաբերի»:

1877ին Յոյս ամսագրի մէջ Տէրոյնց
պատուելին ընդարձակ յօդուած մը կը
հրատարակէր, պաշտպանելու համար Ս.
Գրքի երկրորդականն գրքերը, և կը
պաշտպանէր այն տեսակէտը, զոր որդե-
գրեր էր Տրիտենդեան Հոգևոյն Սիւն-
հոգոսը, իբրեւ Հայկական Եկեղեցիի ալ
տեսակէտը: Տէրոյնցի փաստաբանութիւնը
ուղղուած էր գլխաւորաբար քաղաքական
ընդդիմախօսները լուծեցնելու՝ Սատիքոս

(*) Շար. Ասիոյի քիւրճ և վերջ:

Պատրիարքի «Բարի մարդ և բարի Բրիտանաց» գրքին հետևող սկզբունքով, և լայնքան ծայրայեղութեան կ'երթար, որ կանոնական Ս. Գրքին մէջ ալ թերիներ կը փնտռէր և ապացուցանելու կ'ելլէր ի հաստատութիւն իրեն վարկածին. մինչդեռ շատ պարզ էր խնդիրը: Այդ յօդուածով թունդ յետադիմականութիւնն էր, որ վերջին անգամ կը պաշտպանէր կաթոլիկ տեսակէտը:

Այն օրէն ասդին կը յեղաշրջուէին միտքերը. և 10 տարի վերջը Նար պէյի ձեռնարկը կը վաւերացնէր ժամանակին Կրօնական Ժողովը, որուն Ա. ատենապետ էր Խրիմեան Հայրիկ և Բ. ատենապետ Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան, և Յարութիւն Պատրիարք կը հրամայէր նոյնին տպագրութիւնը:

Կրթական Գրիտոնէականի 1887ի Բ. տպագրութեան հրատարակումովը Հայ Եկեղեցին կ'անցնէր կաթոլիկութեան տեսակէտէն ճիշտ նախնական Հայկական Եկեղեցիի ուղիղ տեսակէտին, և դարերէ ի վեր սարքուած ծուղակէն դուրս կուգար: Բողոքական եղբայրներ անմիջապէս խնդակցեցան այդ մեծ քայլին, որ իրենց տեսակէտին կը հակեցնէր Հայ Եկեղեցւոյ բնութեամբ ըստ իրենց, ի մասին Ս. Գրքի կանոնական հատորներուն. բնականապէս կաթոլիկ կուսակցութիւնը կը սրտնեղէր: 1887ի այդ ձեռնարկը անգլիէն դարագրուի մը կը դառնար, և յայնմետէ հրատարակուած քրիստոնէական վարդապետութիւն ուսուցանող գրքեր՝ կը թօթուէին իրենց վրայէն տեսակ մը հռոմէականութեան մօտեցող բացատրութիւնները: Ով որ կը բաղդատէ Խորէն Նար պէյի «Կրթական»ին 1877ի և 1887ի տպագրութիւնները. Տ. Սահակ քահանայի Բնական Կրօնագիտութեան Ա. և Բ. տպագրութիւնները, սխալ տեսնէ մեր ըսածին ստուգութիւնը:

Հայ Եկեղեցիի տեսակէտը այսպէս ի լուր աշխարհի հռչակուելէ և փառաբանուելէ վերջը, շատ տարօրինակ էին Օրմանեան Պատրիարքի գաղափուկ և յայտնի թափած ճիգերը, որպէս զի Հայ Եկեղեցին յետադիմական քայլ մը առնէր և վերադառ-

նար նորէն կաթոլիկ տեսակէտին: Այդ Պատրիարքը գոնէ իր նախկին կաթոլիկութեան հանգամանքը ի նկատ առնելով, պէտք է զգուշանար Ս. Գրքի մասին ազգին որդեգրած սկզբունքին առջեւ խօսելէ. մինչդեռ ընդհակառակն իր պատրիարքութեան առաջին օրէն սկսեալ՝ գաղափար պայքար մը սկսաւ իր անհատական գաղափարը հիմնադրելու և մեր եկեղեցին Տրիտենդեան Հռոմէական Սինոդոսին վճիռին հետեւակ ընելու: Ան իր քարոզներուն բնաբանը միշտ ընտրեց երկրորդականոն գրքերէ՝ գոնէ թերթերու մէջ անոր բերանը դրուած քարոզները այդպէս ներկայացան: Տարիներով շարունակեց անիկայ իր այդ փոքրականտը, և ապա ո՛չ մէկ կողմէ բողոքի ձայն լսելով՝ համարձակեցաւ և ելաւ Աստուածաշունչի ընկերութեան գործակալ Մր. Պօէնի գրած նամակովը մաքառել Եզրասի կանոնին դէմ, որ իր ուժէն շատ վեր էր: Բանգի Եզրասը հեղինակութիւնն էր և է Խարայէլի պատմութեան մէջ, նկատմամբ Ս. Գրքի: Այն օրերուն Անեսաբերը հեգնեց Օրմանեանը և գրածն ալ անուանեց պատուելիական: Յաւալին ան էր, որ Լոյսը իր սխնականներուն մէջ ստիպուեցաւ հրատարակել այս տօքիւման-նամակը:

Հիմա կը մնայ մեզի ան ատենի լուծեան քօղը պատուել, և ըսել թէ Օրմանեան՝ կաթոլիկ տեսակէտը, որ յառէս ջրնջուած է Հայուն համար, կ'ուզէր ատով կենդանացնել, և արիկայ կը կազմէ իրեն դէմ յարուցուած մեղադրանքներուն մէջ կարեւորներէն մին, ըստ իմ կարծեաց:

Բանաձեւելով մեր գաղափարները, կ'ըսենք. «Հայ Եկեղեցիի արժանապատուութիւնը կը պահանջէ, որ մենք տպագրենք մեր տպարաններէն հին և ընտրելագոյն ձեռագիրներէ ամբողջ Ս. Գրքը, ու ածանազին ցրուենք Հայ Ժողովրդի մէջը: Հրատարակուելիք Ս. Գրքը պէտք է բաղդատուած ըլլայ յունական եօթամասնից օրինակին ընտրելագոյն ձեռագիրներուն հետ, և թարգմանութեան սխալները սրբաբարդուին: Պէտք է երկու նոր հայերէններուն թարգմանուած ըլլայ այն, որպէս զի

ժողովուրդը՝ օգտուել մեր հրատարակութիւններէն և կարօտ չմիայ Բողոքական թարգմանութեան, որուն Հին Կտակարանը մեր Եկեղեցիի գեղեցիկ բնագիրէն տարբեր է իր շատ մը հատուածներուն մէջ: Պէտք է մեր տպագրութեան մէջ որոշ կերպով գատուել Կանոնական Ս. Գրքը, և անկանոնները առանձինն տպուին, որպէս զի հաւատքի և բարոյականի ինդիւիդուալ մէջ բոլոր կոչումները միմեկին Ս. Գրքէն առնուին, ու այդ պարագան պէտք է Ս. Գրքի յառաջաբանին մէջ հանդիսապէս հրաշակուել, որպէս զի լատինամիտ որ և իցէ մէկ Պատրիարք ապագային չյանդգնի այդ կարգի ձեռնարկութիւններ ընելու:»

Ասով ես չեմ ուզեր դէմ խօսիլ Լատին Եկեղեցիի կարգ ու սարքին. այլ կը պաշտպանեմ իմ Եկեղեցիի տեսակէտը: Բողոքական թարգմանութիւնն ալ չեմ պախաբաներ. սակայն իրաւացի կը գտնեմ որ արեւելեան Եկեղեցիի այդ պատուական օրինակը, զոր Քրիստոս մեր Տէրը նուիրականացուցած է իր կոչումներովը, անիկա, թարգմանուել և մեր ժողովուրդին մէջ տարածուել: Մեր թարգմանութիւնը եւրոպացիներն իսկ զարմացուցած է, որոնք զանի կոչած են «Թագունի թարգմանութեան»: Արդ ինչո՞ւ մենք մեր բնիկն ու տոհմայինը ձգենք ու օտարին կռուենք երթանք: Ո՛չ կաթոլիկ, ո՛չ Բողոքական, ո՛չ ալ Օրթոտոքս, ՀԱՊԱ. ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ:

Դ. ՌԻՒՇ ԿԵՏԵՐ

1. Ս. Գրքի համար ընտիր Համաբարբառ մը արդէն ունինք Հայերէնի մէջ Երուսաղէմի տպարանէն հրատարակուած: Նոր Կտակարանի համար Համաբարբառ մը պէտք է առձեռն գործածութեան համար, վասն զի հին տպագրութիւնը սպառած է:

2. Ս. Գրքի երկու Բառարաններ կան. մին Մխիթար Արքայինը, իսկ միւսը՝ Պապի Հառուսի հրատարակութիւն. երկուքն ալ անբաւական մեր Եկեղեցւոյն համար. ուր մը պատրաստել պէտք է՝ Հայ Եկեղեցիի տեսակէտներուն վրայ հիմնուած:

3. Ս. Գրքի Ներածութիւն մը պէտք է. վասն զի Տր. Անկլոսի հրատարակութիւնը հինցած է և մեր Եկեղեցիի տեսակէտը չի

պաշտպաներ: Ընդարձակ մեկնողական գրքեր ունինք ձեռագիր կամ տպուած, սակայն կանոնաւոր, հակիրճ և Հայ Եկեղեցիի ոգիին համաձայն Ներածութիւն մը անհրաժեշտ է:

4. Բնական ոգին նկատի առնել պէտք է պատրաստուելիք Բառարանին և Ներածութեան մէջ, և բանաւոր չափ մը որդեգրել հարկ է երկու ծայրայեղութիւններէն՝ զուշանալով: Բարձրագոյն քննադատութիւնը բաւական յախուռն ընթացքներն անշուշտ անընդունելի են մեզի, քանի որ անոնք նպատակ ունին Գնչել Ս. Գրքի գերբնական մասը կամ ներշնչութիւնը, և ատիկա կը սպառնայ մեր Եկեղեցիին վարդապետութեանը որ անալալայելի պիտի մնայ ընդ միշտ, իբրեւ այն հիմը որուն վրայ կը հանգչի Ս. Եկեղեցին, որ է միւս և հաստատութիւն ճշմարտութեան:

5. Աստուածաշնչի ընկերութիւն մը կազմել պէտք է, որ սատարէ Հայկական Աստուածաշնչի և անոր վերաբերեալ դրականութիւնը մշակելու համար:

6. Տարիին ընթացքին մէջ Եկեղեցիին ժամերգութեանց ատեն ամբողջ Ս. Գրքը գէթ մէկ հեղ կարդալ պէտք է, մինչդեռ հիմա կան հատուածներ որ բազմիցս կը կարդացուին, իսկ հատուածներ ալ որոնք բնաւ չեն կարդացուիր:

7. Ս. Գրքի կրթականօրեայ դասախօսութիւն մը հաստատել պէտք է, որպէս զի ժողովուրդը ծանօթանայ Ս. Գրքին: Բողոքական Եկեղեցիին այդ շրջութիւնը վերին աստիճանի օգտակար է, և պէտք է այդ մասին հետեւիլ անոր օրինակին. մինչդեռ ցաւալի է ըսել թէ մեր Եկեղեցական ներու թերեւս բարձրաստիճաններն իսկ հմուտ չեն բողոքական միջակ երէցներու չափ՝ Ս. Գրքին:

Մուցանք նշանակել Կանոնականներու ինդրոյն առթիւ թէ Հայոց Ս. Եկեղեցին անկանոն գրքերէն հատուածներ թէ և կը կարդայ, բայց յատկանշական է անոնց վրայ դրած վերնագիրը. զոր օրինակ «Իմաստութիւն Աղոթման»-ները Առական անուանով որակելէն վերջը՝ կը թոյլատրէ անոր կարդացուիլը, և ատիկա Եկեղեցիին տեսակէտը շատ բացորոշ կերպով ցոյց կուտայ և մեր տեսակէտը կը հաստատէ:

ՎԱՐԴԱՆ ԲԷՆՅ. ԱՐՄԱՆԵԱՆ

Խարքերդ

ԲՆԱԽՈՍԱՆ - ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

Վ Ի Շ Տ Ր

Ա.

Ամէն մարդ գիտէ թէ վիշաք ի՞նչ է . լաւագոյն պիտի ըլլար չգիտնալ, և ես ընթերցողներուս պիտի մաղթէի որ ընաւ չգիտնային զայն . բայց ան, կարծես, բնութեան մէկ ոխալմուռը կամ մարդկութեան մէկ յանցանքը՝ մեր կեանքէն ա՛յնքան անբաժան է որ, շատ դժուար է գրտնել ուրիշ ո՛ր է բան մը անհատական կեանքին և ընկերային ամէն հարցերուն այնքան սերտիւ կապուած : Աւելի կարեւոր պիտի ըլլար անոր պատճառը գտնել քան տանջանք տալ :

Մարդ ամէն ժամանակ բողոքած է վշտին և մահուան դէմ, որոնք իրեն հակաբնական կ'երևին . ի գուր բողոքած է աշխարհային ունայնութեան դէմ զինքը չըջապատող այս անեղբ, անսահման macrocosomeին առջև : Մարդ, Թիեզերքին անհունութեան մէջ կորսուած փոշի մը, չորս կողմէ փշաղ հովիւրէն տարուբեր աննշան հիւլէ մը՝ որուն դատապարտուած է դառնալ վաղ կամ անագան, անէծք և լուտանք կ'ուզէ ամէն ժամանակ վշտին դէմ անհուն անջրպետին մէջ . բողոքած է փուշերով և կոխահերով լի այս կեանքին դէմ զոր սկսելու համար ծնած է լալով, վերջացնելու համար աքճալիւքներու մէջ . ինչո՞ւ հազար տեսակ տառապանքներ կը շրջապատեն, կը հետապնդեն, անդադար կը հալածեն զինքն այս ճամբուն ամբողջ երկայնքին, որ տառասկի և ապսինթի ամբողջ անտառի մը կը նմանի :

Պարթօյնիի արձաններէն Նիանալի գլուխագործող մը, «Անմիտիթարելին», հագեբանօրէն ամէնէն գեղեցիկ մարմնացումներէն մին է տեսական դարձած վշտին : Այս արձանին ներքե հարկ չկար իսկ Անմիտիթարելի գրել . — Նստած կ'իյն մը, կարծես հանգչեցնելու համար իր ամբողջ մարմինը, հոգին ամբողջովին ընկղմած իր վշտին ոռնու-նութեան մէջ : Թեւեղ կը հանգչին ծունգե-

րուն վրայ . վեր՝ երկինք չի նայիր, վաճառ գի ամէն յոյս ոչնչացած է իր մէջ . կը նայի հորիզոնին և դնդերներու առանց ո՛ր է կարկամութեան կ'ըսէ . — «Չարչարուեցայ, վշտակրեցայ և պիտի վշտակրիմ յաւիտեանց» . և ոչ մի կարկամութիւն, միայն յոնքերու թեթեւ մերձեցում մը և աննշմարելի փոթ մը ստորին շրթունքին : Արեւեստադէտը լաւ մը պատկերացնելու համար ճշմարտութիւնը, թերեւս ուղած է հրաժարիլ անոր դէմքին տալու գեղեցկութիւն, բայց գեղեցկութիւնը գոյութիւն ունի նոյն իսկ վշտին մէջ, և արձանը թէ՛ ճշմարիտ է և թէ՛ գեղեցիկ միտնգամայն :

Ամէն վայրկեան, ի ծննդէնէ մինչև գերեզման, կը զգանք զայն մեր քովիկը, իրրեւ թշնամի մը միշտ պատրաստ յարձակելու մեր վրայ և խորունկ մաածումի և ինքնամիտփութի ժամերնուս, յանցանքի մը պէս կը կանգնի մեր երեւակայութեան առջև :

Վիշաք, օղին պէս անշուսփելի, անջրպետին պէս անհուն, կը մտնէ մեր կեանքին ամէն մէկ գործողութիւններուն մէջ, կը դարձուրեցնէ վտառախրանքը և կը սրտապնդէ անսկունակարագիրները՝ գերազոյն պայքարներու մէջ : Անլուծելի խնդիր մը բնախօսին համար, անքնելի գաղտնիք մը փիլիսոփային համար, զթասիրտ խորհրդական մը արդարառէրին համար և ոտնջանք մը ամէնուկ համար : Կենդանաքննը կը պրպտէ անոր բոյնը, բնախօսը անոր ծագումը, նիստաբանը անոր պատճառները . բժիշկը կը հունդարտեցնէ զայն, օրէնագիրը և փիլիսոփան կը հետապնդեն զայն առանց երբեք հասնելու անոր . օրէնագէտը և աստուածաբանը վրէժ-խնդիր դատաւորի մ'առջև կը դնեն զայն . ամէնքն անկէ կը վախնան և կը կռուին անոր հետ :

Ամէն մարդ ծնած վայրկեանին իսկ կը գտնէ բարոյական վիշտերու ծանրութեան բաժին մը զոր պիտի կրէ և որ երթալով կ'աւելնայ գիւրազգածութեան և կարեկցական զօրութեան աճման հետ : Վա՛յ անոր սակայն, որ այս դժուրակ աճման հետ հաւասար կերպով չաւելցներ, գոնէ մինչև

մէկ աստիճան, իր խորհելու, մտածելու չափազորիչ զօրութիւնը և կարողութիւնը. վասն զի այն ատեն մեր կեանքին կէսէն աւելին վիշտերու, ցտեղերու և տառապանքներու յատկացուած պիտի ըլլար:

Բարեացակամ զգացումներու վիշտ մըն է նաև խղճին խայթը գրեթէ միշտ: Զղջալ մըն է մէկուն սիրտը վիրաւորելը կամ բռնի մը վնաս պատճառելը, վշտագին նպաստած մըն է անցելոյն վրայ և անաչառ քննութիւն մը մեր վարմունքին դորայլ ևս չենք կարող բարեփոխել: Համբ կեդրոնացում մը կը գիտենք հոն մարդուն ինք իր վրայ. նայուած քրկոր, կարծես իր ուղեղէն ծնած պատկերի մը կը հետեւի, կամ անցեալին յիշատակը կը պրպտէ: Խղճի խայթ ունեցողին համար, ուրիշին վիշտ պատճառելու զգացումը տանջանքներուն ամէնէն անգութն է, զոր երբեք հնարած ըլլայ Հաւատաքննութիւնը:

Յոռեւտեաներուն համար, վիշտը ամէնէն պերճաբոս փաստն է թէ մեր մոլորակը գէշ կերպով շինուած է, վասն զի ամէն կենդանիներն ալ միմիայն վիշտով կը կառավարուին: Ճշմարիտ և միակ շարժիչ ուժն է կենդանական յօրինուածքին, միակ աղբիւրն է ամէն մտածման, ամէն զգացողութեան, ամէն զօրութեան: Կ'ուտենք, կը խմենք, կը սիրենք, չտառապելու և չչարճարուելու համար: Կը գործենք, կը հնարենք, կը կարդանք, կը գրենք: Վիշտը, աշխարհի չէնքին մայր բանալին է, կեանքին ինչո՞ւ համարն է: Այս անհեթեթ տեսութեան հետեւութիւնը մահուան փափաքիչն է, միակ ապաստանը վշտին դէմ, միակ դարմանը կեանքին որ մեզի տրուած է անգութ քնութենէ մը, առանց մեր հաւանութեան:

Վիշտը, որ այնքան բեղմնաւոր է կրակիծներով և ցտեղերով, որ իր ալլազանութիւններուն մէջ անհուն է ուկէանտսին տաւալին հատիկներուն պէս, և խորունկ տնոր անդունդներուն պէս, վերապահած է սակայն իր ամէնէն թախծալի, իր ամէնէն կեղծալի դաւնութիւնները, իր է՛ն անգութ, է՛ն անողոք տանջանքները զգայուն, անկեղծ սրտի մը փափուկ զգացումներուն

վիրաւորանքին. վայրկեաններ կան ուր Տանթէի «Դժոխք»ը անուշաբոյր ծաղիկներու փունջի մը կրնայ նմանիլ:

Զգայուն սրտի մը զգացմանց մէջ այն տեսակ դառն վիշտեր կան որոնք սիրտն անկարող կը դարձնեն կեանքէն անբաժան ուրիշ տեսակ վիշտերու ազդեցութիւնն զգալու, և տարիներով հոգեկան ջերմ, մոլոր սթնոլորտի մը մէջ սնած, ապրած և իր սիրական խեղալն արդէն կազմած սիրտ մը, մէկ վայրկեանի մէջ կը խորտակի, կը փշուրի, կը սպաննուի այլ ևս բնաւ չվերականգնելու համար:

Հիւսօ, Նաթոյեան յը Բըթիի մէջ կ'ըսէ՝ «Վշտին մէջ այն տեսակ սերտ և մթին կողմեր կան ուր ամէնէն խրոխտ նկարագիրն իսկ կը խոնարհի»:

Պիտի ըսէք ինծի թերեւս որ Նախախնամութիւնը կը գործածէ վիշտերու այն ընդդիմակրութիւնը և հակառակութիւնը՝ իբրև մեղմացուցիչ դարման քանի մը աւելի խորին վիշտերու դէմ. բայց առանց քաշուելու պիտի պատասխանեմ, առանց Նախախնամութիւնը օգնութեան կանչելու, թէ առիւծ մը չի կրնար միեւնոյն ժամանակ իժ մը ըլլալ, և թէ մի և չոյն աստի կարելի չէ որ թէ՛ մաղձ և թէ arsenic ըլլայ:

Յոռեւտեան մը պիտի մտածէր թէ կարծես ստիպուած ենք հնազանդելու այն անգութ օրէնքին որ, ըստ ուսանց, կ'ուզէ որ ոչ ոք երջանիկ ըլլայ այս մոլորած մօլորակին վրայ, և ըստ Ծօթնհառէրի, մարդս պարտի ապաստանիլ հնդիկ փիլիսոփաներուն Նիրվանային մէջ, ուր կը դադրին կեանքն ու վիշտը:

Նոյնպէս ումանք կը կարծեն թէ Ղդային կեդրոններու վրայ, որոնք արգասաբեր աղբիւրներն են անուղի վիշտերու, բարոյական միջոցներով կարելի է անզգայութիւն յառաջ բերել: Կարելի է նաև ընդհակառակն, առաջ բերել հակազդգութիւն մը ուղեղին մէկ ուրիշ կէտին մէջ՝ ամոքելու համար հիւսանդ կէտը revulsif ներդիւ և թմբեցուցիչներով: Եթէ ախտաբանական միջոցի դիմենք, հոն պիտի գտնենք ճշմարիտ ընդմիջումներ տառապող

գործարանին և խզճին միջև : Իրաւ է թէ սրտին փոթորիկները, ամոքելու, մեղմացնելու համար բարոյական շիջանքով դարձան ալ ֆիզիքականին պէս է, և մօեփիւնը, քորալը, ակիւնը մեծ ծառայութիւններ կրնան բնծայել մինչև մէկ աստիճան, մինչև որ բարոյական միջոցները յաջողին մոռցնել տալ, եթէ կարելի չէ այսպէս ըսել, զգայուն սրտի մը տառապանքները : Բայց այս պարագան այնքան հաղուադէպ է, այնքան անհաւանական որ կրնանք եզրակացնել թէ բացառութիւնը ինքն իսկ կը հաստատէ ընդհանուր կանոնը, և ինչպէս որ ամէնէն ազնիւ գինին իսկ իր մրուրը կը թողու հնձանին մէջ, նոյնպէս ալ վիշաք, եթէ նոյն իսկ յաջողիչք դարձանել, գարծաւ պիտի թողու իր աւերիչ հետքը զգայուն սրտի մը խորը :

Ատելու անկարող մարդը կը առաւապի բարոյական ամէնէն դժնդակ վիշտերով, առանց վրէժխնդրութեան մտածելու իսկ : մինչդեռ այն որ վայրագ և անդուծ բնադդներ ունի, իր վրէժը կը լուծէ նոյն իսկ ուրիշներու վրայ : Ըսուած է թէ Ճընարտուրը գիւնիին մեջն է, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել թէ՝ միշտն մեջն է :

Երբ որոշեալ աստիճանին հասնի ան, բռնի դուրս կը զեղու : հակառակ պարագային կեանքն է որ վտանգի կ'ենթարկուի : Այն ատեն զիմակը վար կ'ընայ, ունայնամտութիւնը կ'անհետանայ և զգացման ամենաթաքուն զօրութիւնները ամէն կողմէ դուրս կը ցայանեն : Մեծ հպարտութիւն մը և զօրաւոր նկարագիր մը պէտք է այն ատեն ծածկելու համար ինչ որ կայ մեր մէջ :

Ուրախութեան մէջ, ամէնքս ալ առաւել կամ նուազ տրամադիր ենք մեծանունութեան : Բայց վիշտն է որ կը կշռէ ճիշդ ու ճիշդ մեր մէջ գտնուած եսը, արժանապատուութիւնը, բարեացականութիւնը կամ վայրագ բնադդները :

Զգացման վիշտերը շատ աւելի մեծ ազդեցութիւն ունին մարդկային երջանկութեան վրայ քան զգայարաններուն վիշտերը : հաղուադէպ է որ ֆիզիքական վիշտ մը երկար տեւէ և ամէնէն տնտա-

նելի հիւանդութիւնը կը վերջանայ կա՛մ բժշկուելով կամ տխուր վախճանով : նոյն իսկ ֆիզիքական ցաւերու մէջտեղ կեանքը կրնանք տանիլ և ուրախութիւններ վայելիլ :

Բարոյական վիշտը, ընդհակառակն, կրնայ ոչ միայն անմիջապէս կամ յամբար խորտակել, փշրել և աչնայնել, այլ կերպարանափոխել սիրաւ, մտածելու եղանակի, էութիւնը ամբողջ : այն աստիճան որ՝ ու է դարձան, ու է սփոխանք : անգուտ կ'ըլլայ : Այս տեսակ պարագաներ կը հանգիստ բարեացական զգացման պարագաներու մէջ, և սիրելի անձերու կորստեան, կամ անոնցմէ գործուած անհաւատարմութիւններու և կեղծաւորութիւններու առթիւ : Մարդկային բնութեան ցզեխարշ տեսարաններն են : ասոնք, որոնք յոյց կուտան թէ վիշտը որքան հզօր է :

ԼԵՒՈՆ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

Պեշիքաշ

(Մնացեալը յաջորդով)

Ո Ր Տ Ե Տ . . .

Միսի՛ք, անուշ խոնկիկն պէս,
Որ կը ծղիսայ վեհիկէս,
Ո՛ւր էր . . . Ես ալ հոսաւէս
Վեր եղիկ դեպ ի վեզ,
Միսի՛ք, անուշ խոնկիկն պէս :

Սարսո՛ղ, յագու՛ղ ֆեմիկն պէս,
Որ կը քրքում . . . կը փրփրի՛ . . .
Ո՛ւր էր . . . քիղերս փառսով դի,
Սարսո՛ղի սիրակէզ,
Սարսո՛ղ, յագու՛ղ ֆեմիկն պէս :

Լուսաքրոքի՛ն ասդիկն պէս,
Որ կը շոքայ . . . դողդողուն,
Ո՛ւր էր . . . դեմքիդ քու սիրուն
Կախ՝ դողայի՛ վեճապէս
Լուսաքրոքի՛ն ասդիկն պէս :

ԼՈՒՍԵՔԱԳ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ Դ.

Գարիէլ Երանեան. — Իր հրատարակութիւններ. — Վաղահաս մահը. — Համբարձում Չեղեան. — Գարիէլ Խանճեան. — Արիսակէս Յովնանեանի վերջին օրեր. — Յաւայի տանը. — Իւր հեղինակութեանց պահանջուիլը. — Մայր եկեղեցոյ Դպրաց դասուն առարկութիւններ. — Տիկին Լոյսիկ Եալճեան:

Գարիէլ Երանեանի ծննդեան բուն թուականը յայտնի չէ մեզ. բայց ըստ վերականգնման իւր մօտաւոր ազգականաց միոյն՝ ծնած է հաւանականաբար 1827ի վերջերը: Հայրը՝ Օհան Երանեան՝ դուռ ուցի և արհեստով որմնադիր, կը բնակէր Գաւազարու Մօլա Թաշը ճառագիտի, Յուսէի Համբարձում եկեղեցւոյն դիմացը: Օհան Պոլկոյ մէջ ամուսնանալով 4 մանչ և 2 աղջիկ զաւակներ ունեցած էր, որք են՝ Մանուէլ, Գարիէլ, Միքայէլ, Ռափայէլ, Հռիփսիմէ և Ազաւնի:

Մանուէլ մայրենի լեզուն ուսած ըլլալով և Միքայէլ գաղիերէնը, երկուքն ալ ուսուցչութեամբ կը պարապէին. իսկ Ռափայէլ անդրանիկ աշակերտներէն եղած էր Երկրագործական վարժարանին: Հռիփսիմէ ուսման չրջանը աւարտած էր Սասգիւղի Ներսէսեան վարժարանին մէջ և գաղիերէնը իր մայրենի լեզուն պէս կը խօսէր. իսկ Ազաւնի դեռահաս տարիքին մէջ մահացած էր. (Կենսագրութիւն Գարիէլ Երանեանի, ձեռագիր, Յովհաննէս Ժանֆէսճեան):

Գարիէլ մինչեւ 14 տարեկան հասակը Մայր վարժարան յաճախէլէ յետոյ, ծնողքը փափաքելով զինքն առեւտրական գործի մէջ մտցնել, մօրեղբօրը՝ Ժանֆէսճի Անդրէասի քով աշակերտութեան զրկն, ուր տարի մը շարունակեց առանց օգտուելու: Գարիէլ չատ անգամ խանութին մէջ նստած, կը մրմնջէր ձեռքը գրտ-

նուղ թուղթի կտորի մը վրայ աչքերն յառած. իր պաշտօնակիցները այդ անպատշաճ վարմունքն զգացնելով իրեն, թուղթը ձեռքէն կը կորզէին, որ ուրիշ բան չէր, այլ հայկական ձայնագրութիւն, որոյ ճաշակն առած էր՝ Արիստակէս Յովհաննէսեանէ դաս առած միջոցին: Երանեան միշտ կուլար և կ'աղաչէր իր ծնողաց՝ որ վերստին Մայր Վարժարան զրկեն զինքը. վերջապէս ծնողքը չկարենալով դիմադրել անոր փափաքներուն, ստիպուեցան միևնոյն դպրոցը դնել զոմն վերստին:

Այս անգամ Գարիէլ աւելի խելաւորաբար ըլլալով բաւական յառաջացաւ երաժշտութեան մէջ, և գեղեցիկ ձայնին շնորհիւ ժողովրդեան համակրանոց և իր վարպետին մասնաւոր խնամոց առարկան եղաւ: Գիշ առնէն տնքաւական նկատեց միայն հայկականը սովորիլ, ուստի սկսաւ եւրոպական ալ հետամուտ ըլլալ. երբ այդ երկուքին ալ ըստ բաւականին հմտացաւ, ուզեց այլեւս բոլորովին ինքզինքը նուիրել այդ ասպարէզին, և վարպետէն յանձնարարական մը առնելով Սասգիւղի վարժարանին դասախօս կարգուեցաւ, ուր իր առաջին հեղինակութիւնն բրաւ Պէյրաթի Արապան եղանակով «Տէր ողորմեա»ն: Այս պա ազգականը կը պատմէր թէ՛ Ամիրաներէն մին երբ կը լսէ այդ եղանակը, ոմնքան կը յափշտակուի՝ որ Ս. Պատարագի աւարտումէն վերջը Երանեանը քովը կանչելով թղթագրասի 1000 դրշ նոց ծրար մը կը պարգեւէ: Այս պարագան բաւական կ'ըլլայ իր համբաւը տարածուելուն, որով հետզհետէ խախտմանօք կը ստիպեն զինքը այցելութեամբ դասախօսել նաև Թրթագիւղ, Գուգլունճուք, Կէտիք փաշա ևն. ուր նորանոր հեղինակութիւններով կը ճոխացնէր եկեղեցական եղանակները:

Միւս կողմէ կ'աշխատէր նաև եւրոպական երաժշտութեան, որուն մէջ ա'նչպիսի յառաջացաւ՝ որ 1858ին իր վարպետին գործակցութեամբ սկսաւ հրատարակել եւր. նօթայով Բնաւ Արեւելեան ամսաթիւրը: (տե՛ս գլուխ Գ.) Թէ՛ դաշնակի, Թէ՛ ջութակի և Թէ՛ տարբեր նուագարաններու համար հայ. գաղ. տաճկ. և

յունարէն լեզուններով . սակայն այս մեծածախ ձեռնարկին չկարենալով տոկալ, ստիպուեցան տարիէ մը վերջ դադարեցնել, թէեւ նիւթական մասը Արիստակէս Յովհաննէսեանի վրայ ըլլալուն ինքը մեծ միաս մը չկրեց, բացի աշխատութենէն: 1861ին վերստին սկսաւ հրատարակել կիսամսեայ Բնարը, այս անգամ իր աշակերտներէն Նիկողոս Թաշճեանի ընկերակցութեամբ, միւսէն աւելի համառօտ՝ որ կը պարունակէր զուտ ազգ. երգեր և պարերգներ՝ դարձեալ եւր. նոթայով, որուն քաջանմուտ էին երկու հրատարակիչներն ալ: Ի դիւրութիւն ուսանողաց՝ կիրակի օրեր ձրի դասախօսութիւններ հաստատած էին նաեւ Սկււտարի, Միշագիւլի, Պէշիկ-թաշի, Բերայի, Սաադիւղի, Գարակէօմբիւկի, Սամաթիոյ և Եէնիգարուի վարժարանաց մէջ, ուր կ'այցելէին իւր դասախօս՝ Երանտան Գարրիէլ, Նիկողոս Թաշճեան, Սիմոն Մինէճեան, Ռեթէոս Փափազեան, Եղիա Տնտեսեան, Համբարձում Չէրչեան, Գարրիէլ Խանճեան, Ստեփան Գալֆաեան և ուրիշներ՝ որոնց պաշտօնն էր միանգամայն հայ ձայնագրութեան սկզբունքն աւանդել բոլոր բաժանորդներուն, ինչպէս բացատրած ալ էին Բնարի մէջ մաս առ մաս, որ հազիւ վեց ամիս տևեց. (Մաղիկ, 1903. Արշակ Ալպօյան ձեռն):

Երրորդ անգամ ըլլալով՝ նորէն սկսաւ Գարրիէլ հրատարակութեան ձեռնարկել 1862ին՝ գործակցութեամբ անուանի երաժշտապետ Տիգրան Չուհաճեանի (որոյ վրայ մանրամասնօրէն պիտի խօսինք). ասակայն քիչ ատենէն իրենց նիւթական անկարողութիւնը զգալով, երաժշտական ընկերութիւն մը կազմեցին, որոյ կ'անդամակցէին Գրիգոր Աղաթօն (1823—1868), Նահապետ Ռուսինեան (1819—1876), Գրիգոր Օտեան (1834—1887), Յովհաննէս Միւհէնտիսեան (1810—1891), Յարթ Նէվրուզեան († 1898), Կէօշեան և ուրիշ երուելի անձնաւորութիւններ՝ որոնք Ուսումնական Յանձնաժողով մըն ալ ունէին օժանդակ, բազկացած ժամանակին ուսումնականներէն՝ Մկրտիչ Պէշիկթաշեան

(1826—1868), Թորոս Նաղարեան (1831—1878), Ստեփան Փափազեան (1839—1888), Մատթէոս Մամուրեան (1829—1901), Սրապիոն Հէքիմեան (1832—1892), Յակոբ Ոսկան ևն., որոնք զանազան թաղերու մէջ մասնաժողովներ և ձրի դասախօսութիւններ ունէին:

Ասոնք միանալով սկսան հրատարակել Բնար Հայկական ամսաթերթը՝ միայն հայերէն լեզուաւ, ի հանդէս անկող Նրանեանի, Չուհաճեանի և Պօսթինիի (իտալ.) հեղինակած ազգ. երգերը: Դժբախտաբար Գարրիէլ Նրանեան չկրցաւ այս օգտակար ձեռնարկին մէջ հարկ եղած օգնութիւնը շարունակել իր վաղահաս մահուամբ, որ տեղի ունեցաւ 1862 հոկտ. 13ին, տիտեր տպաւորութեան մը ներքեւ թողլով համայն Ազգը:

Թէեւ քիչ տարիներ ապրեցաւ սա, բայց բազմաթիւ հեղինակութիւններ թողուց իւր յիշատակ. (որոյ պատճառաւ «նոթածի Գարրիէլ» կոչուած էր ռամիկ ժողովուրդէն). ճոխացնելով Ազգ. Թանգարանը իր երգերով, և իրեն արժանաւոր քաջորդ թողլով Նիկողոս Թաշճեան՝ առաջնակարգ աշակերտը: Կենդանութեանը ատեն լուսանկարն հանելու անփոյթ զըտնուած ըլլալով՝ իր մահուընէն վերջը թէև լուսանկարելու փորձ մ'ըրին, բայց խիստ տարտամ նմանութիւն մ'ունենալով՝ օգտակար չկրցաւ ըլլալ, որով զրկուած ենք այսօր իր պատկերն ունենալէ:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԶ. ՇԻՍԱՐԵԱՆ

(Շարունակելի)

Կ Ա Լ Ե Ի Ո Ր

Գաւառի բաժանորդները կրնան Տանարի բաժնեգիրը դիւրութեամբ զրկել, դրամը յանձնելով իրենց քաղաքի նամակատան՝ մանտա-բօսդով զրկուելու համար, տուանց նոյն իսկ համակ գրել պէտք ունենալու. բաւական է որ իրենց հասցէն որոշ գրել տան մանտա-բօսդի թոճիթին վրայ:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԿԱԽԱՌԱՅ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԻՆՊԵՐԸ . —

Ս. ՊԱՏՐԻԱՐԿ ՀՕՐ ՎԵՐՈՒՄԵՐԸ

Քաղաքը, ժողովին անցնելու օրը թիվ խորհրդակցության հանգիստը, զիստաբար առարկան եղաւ գաւառներու ապահովութեան խնդիրը, մասնաւորապէս Տէօթեօթէ հասած հեռակեայ հեռագրին ստիճիւնը . — «Տէօթեօթեօթէ 3 ժամ հեռու տեղ, մէջ 10 դիմեալ անձեր նաճարը և Գրքմաթիւր ազարակներէն քարձուր 20ի չափ Հայերու դէմ երեսնով սպաննեցին անոնցմէ մէկը, և վիրտու Լորեթին ուրիշ երկու հոգիներ: Քիչ ետքը Տէօթեօթէն մէկ ժամ հեռու տեղ մը նոյն զինեալ անձերն երկու հոգիի վրայ ևս զէնք պարպած են: Նաչրաները գտնուող ընտանիքներն իրենց վրանները թողլով Տէօթեօթեօթ փախան: Քաղաքը յուզուած աղաւթագրութեան մէջ է:»

Նմանօրինակ լուրեր անցնելու և առջի շարժուն հասած էին ուրիշ գաւառներէ ալ. քայքայ անապահովութիւնը մասնաւոր կիլիկիոյ մէջ կը ջատէ ժողովուրդին բարոյական կորուրդը, և ականատեսներ կը վկայեն թէ գաւառափոխական շարժումներու բուն պատճառն ուրիշ տեղ պէտք չէ փնտել: Ս. Պատրիարքը նոյն օրը ժողովին հաղորդեց թէ վարչապետին և նախարարներու մօտ ըրած դիմումներու միջոցին գաւառներու ապահովութեան հարցը մէջտեղ դրած է իբրեւ առաջին և էական խնդիր, և սակայն հակառակ արուած վստահութեան, նմանօրինակ գէտքեր կը շարունակուին. հետեւապէս այս վիճակը կը պարտաւորէ զինքը ձեռնմխաբար բոլոր պաշտօնէ, գոնէ պատասխանատուութեան պատկը չմնալու համար: Ժողովական տեսարժան յայտարարեցին թէ ներկայ վիճակին մէջ միեւնոյն պարտաւորութիւնն իրենց վրայ ալ կը ծանրանայ, ուստի յանուն ազգին և ի դիմաց վարչութեան որոշեցին որ Ս. Պատրիարքը նոր դիմում մը ընէ վարչապետութեան և նախարարութեան: Ն. Սրբազնութիւնն այդ դիմումն ըրաւ իշ. օր, այցելելով Ներքին

գործոց նախարար Թալէտդ պէյի, որուն ցոյց տուաւ Տէօթեօթի հեռագիրը, և յայտնեց թէ ժողովրդեան համար երկիւղի նոր պէթիթ մը եղած է ասիական, և յոռի տպաւորութիւն յառաջ բերած է Պատրիարքարանի ժողովականներուն վրայ, քանի որ կիլիկիոյ մեծ աղէտն ալ մասնակի գէտքերէ առաջ եկաւ: Ուստի պահանջեց որ թէ՛ այս վերջին ոճրին և թէ՛ Մշոյ մէջ պատահած ոճիրներուն հեղինակներն երեւան հանուին և պատժուին: Նախարարն հաւաստեց թէ եղածը պարզ ոճրագործութեան արդիւնք է, և թէ կրկին և կրկին հեռագրուած է՝ փութով հետապնդել և պատժել շարագործները: Ս. Պատրիարքը կրկնեց ոճրագործները պատժելու պահանջումը, աւելցնելով որ եթէ Անատոլուի ապահովութեան մասին հարկ եղած վստահութիւնը չհերշտուի իրեն, ինք հանդէպ ազգին ստանձնած պատասխանատուութեան տէր չի կրնար ըլլալ այլևս: Ս. Պատրիարքը խօսեցաւ հողային խնդրոյն վրայ ալ, որուն պատասխանեց նախարարը թէ այդ բարդ խնդիրը կարգադրելու համար զոհողութիւնը փոխադարձ պիտի ըլլայ, ոմանց գետին պիտի տրուի և ոմանց փոխարինութիւն պիտի ըլլայ. և եթէ այս գոհողութիւնն ստանձնուի է կառավարութիւնը, զրկեալ Հայոց գոհացում տալու նպատակով ըրած է: Ս. Պատրիարքը Ատանայի Հայոց որբերուն և այրիներուն նպաստելու ստիպողականութեան վրայ ալ խօսեցաւ, և խոստում առաւ նախարարէն թէ չմիկտն զըշ. Պատրիարքարանի յանձնուելու համար Ելմտական նախարարութեան գրած գիրը պիտի կրկնէ: Այդ գիրը գրուեցաւ նոյն օրը: Ս. Պատրիարքը մեկնելու պահուն վերստին շեշտեց գաւառներու ապահովութեան համար ըրած խնդիրքին նկատառման պէտքը:

* *

Այս տողերը գրուած էին, երբ ժամանակի մէջ ուրախութեամբ կարդացինք թէ իշ. տեսակցութեան միջոցին Ներքին գործոց նախարարը ծանուցած է Ս. Պատրիարք Հօր Նաճառլի կառավարին,

պաշտօնանկութիւնը : Ս . Պատրիարքը դիտել տուած է թէ նմանօրինակ պարագաներու մէջ պէտք չէ լոկ պաշտօնանկութեամբ գոհանալ , այլ պէտք է այդօրինակ պաշտօնանկներ դատի քաշել յօրինակ այլոց : Նախարարը շատ իրաւացի գտած է այս առաջարկը , և հեռագրած է Ատանայի կուսակալին՝ դատի քաշել նաճաղըի կառավարիչը , պատասխանատուութիւնը ճշտելու համար : Մեծապէս յուսադրիչ է մասնաւորապէս թալէաթ պէյի սա յայտարարութիւնը . «Մենք չենք ուզեր որ օսմանցի փողովուրդը յուզող խնդիրներ ծագին : Ես իբր ներքին գործոց նախարար կը յայտարարեմ թէ այդ ոճրագործները ձերբախուցնուն պէս պիտի կախուին առանց աղեւայի , ուրիշներու օրինակ ըլլալու համար : »

Ս . ՀԱՅՐԱՊԵՏԸ գիր մ'ուղղելով Եւքոպայի Հայոց առաջնորդ Տ . Կէորգեայի . Իւթիւճեանի , յանձնարարած է տեղեկութիւն հաղորդել թէ Եւքոպայի Հայոց հոգեւոր վարչութիւնն ինչ վիճակի մէջ կը գտնուի , որ կողմերն եկեղեց . պաշտօն կը կատարուի , ևն . :

ՊՈՍԴԸՆԻ Հայերն երկար ատենէ ի վեր փափաք ունէին իրենց սեփական եկեղեցի մը ունենալու : Նոյն քաղաքի Հոգաբարձութիւնը Յուլիս 10ին Պոսդընի և շրջականերու ազգայիններէն ժողով մը գումարեր է եկեղեցի մը շինելու կարելիութեան վրայ խորհրդակցելու համար : Ներկաները համակրութեամբ ընդունած են սկզբունքը , և շինք հոգիէ բաղկացեալ մասնախումբ մը կազմած են , մէկ ամսուան մէջ խնդիրն ուսումնասիրելու և ժողովին տեղեկագիր մը բերելու համար :

Տ . ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿ . Բարից գտնուած միջոցին ժողովրդեան ուշադրութիւնն հրաւիրեր է Հայկ . Բարեգործական Միութեան վրայ , բացատրելով այդ Մարմնոյն բարեբար դերը , մանաւանդ Կիլիկեան արհաւիրքէն ետքը : Բարիդի Հայերը մեծ համակրութիւն ցուցուցած են Միութեան նպատակին համար , և խոստացած են իրենք ալ մասնաճիւղ մը կազմել :

— Ֆրանս . Խորհրդարանի անդամ Հայասէր Մ . Տընի Գօշէն տեսակցեր է Տ . Մուշեղ եպիսկ . Ի հետ , և յոյս յայտներ է թէ Կիլիկեան աղէտը վերջինը պիտի ըլլայ Հայոց տառապանքին , և Սահմանադրական Թուրքիոյ մէջ երջանկութեան թուական մը պիտի սկսի իրենց համար :

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ծանօթ գործիչ Անդրանիկ Պուլկարիայէն նամակ մը ղրկելով Հայկ . Բարեգործական Միութեան Կեդր . Ժողովին , իր արտագին համակրանքն յայտնելէ ետքը դէպի այդ ընկերութիւնը , հասարակութիւնն հրաւիրած է Սասունի և շրջակայ գիւղերու Հայութեան ողբալի վիճակին վրայ , խնդրելով մշակութեան միջոցներ հայթայթել այն տարաբան ժողովուրդին : (Լուսարեւ-Արեւ)

ԿՐԾՆ . ԺՈՂՈՎՈՅ որոշմամբ հարցում պիտի ըլլայ Նիկոմիդիոյ Առաջնորդին , թէ ինչպէս կ'ըլլայ որ . Կեդրոնի արգելքին հակառակ , Ատաբազարի եկեղեցիին մէջ դպրոցական հանգէս տեղի կ'ունենայ , մինչդեռ Վարչութիւնն առարկութեան տեղի չտալու համար ո'չ միայն բանախօսութիւնները , այլ և սովորական հանդէսներն արգելեց եկեղեցիներու մէջ :

ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ և իր զեղծումներն երեւան հանող Էնֆիէճեան շարաթօր Տնտես . Խորհրդոյ անդամոց ներկայութեան երես առ երես բերուեցաւ Պատրիարքարանի մէջ , և Էնֆիէճեան մի' առ մի կրկնեց ու փաստերով հաստատեց ասկէ առաջ ըսածները : Տնտես . Խորհուրդը այդ քննութենէն ետքը միաձայնութեամբ զատապարտելի գտաւ Հրանտ Մարգարեանը , և որոշեց այդ կերպով պատրաստած տեղեկագիրը ներկայացնել Քաղաք . Ժողովին :

ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ ՆՇԱՆԱԽՍՈՒԹԵԱՆՑ տութիւ , անցեալ Եջ . սկսաւ գործադրուիլ Տնտես . Խորհրդոյ մէկ կարգադրութիւնը , որու համեմատ 50 զրոյ նոց իւր տրուելու պարագային և անկէ վեր եղած գործողութեանց համար Ազգ . տուրքերը կը գանձուին ամբողջ , իսկ եթէ 10 տարեկան տեղի ժամանակ մը չէ գանձուած , միայն 10 տարուան պիտի գանձուի : Գէն խաշնա

գինով ըլլալու պարագային չորս տարուան տուրք պիտի գանձուի: Զենք կարծեր որ այս կարգադրութիւնը նպաստէ հասոյթի առաւելութեան, որովհետեւ շատեր պիտի աշխատին կէս խաչագինով կարգադրել գործը. 10 տարուան տուրք վճարել չհարկադրուելու համար: Մնաց որ ամուսնութեանց ատեն բանաւոր չէ դժուարութեանց սուիթ տալ: Արդէն ամուսնացողները, ընտանեկան պարկեշտ բոյն մը կազմել ուզողներն հազուադէպ են այնքան...:

Այս տողերը շարուած էին, երբ Կրօն. ժողովոյ Դշ. ի նիստի որոշմանց մէջ կարգացինք թէ քահանաներու դիմումին վրայ, որոշուած է Ս. Պատրիարք Հօր իրրեւ նախագահ Բաղաք. ժողովոյ՝ գրել որ երկու տարուան Սզգ. Տուրքէ աւելին համար չպնդուի Պապի առթիւ: Տնտես. խորհուրդը կրնայ պնդել որ եւրոպայ ճամբորդողներէ կամ կալուածական ստուծախ ընողներէ գանձուի ամբողջ տուրքը:

Կը յիշենք թէ նշանախօսութեան ծախուց առթիւ քահանայ հայրերու կողմէ ասկէ առաջ ալ գիր մ'ուղղուած էր Պատրիարքարան. եւք մը ունեցաւ արդիօք:

ԿՐԾՆ. ԺՈՂՈՎԷ Դշ. օրուան նիստին մէջ եւգոկիոյ Առաջն. քնտրելիաց եռուն ջանքը կազմեց հետեւեալ եկեղեցականներէն.— Տ. Արտաւաղդ Մ. Վ. Գաւլէտէրեան, Տ. Վարդան Մ. Վ. Գասպարեան և Տ. Եղիշէ Մ. Վ. Գալֆաեան:— Երթոշտական Բնիկ Յանձնաժողովին կողմէ տրուած երկու տեղեկագիրներու վրայ ժողովը որոշեց Երթոշտութեան երկրորդ կարգի վկայական տալ Սասգիւղցի Պ. Արզանէս Ս. Նիզամեանի, Բաքերդցի. և Պ. խորէն Յ. Պարոնեանի:— Տ. Աղան Մ. Վ. ք Նարբ գաբուի քարոզիչ նշանակեց:

ԵԱԹՆ ԺՈՂՈՎԷ գումարուեցաւ Դշ. օր Ղալաթիոյ խորհրդարանին մէջ: Տ. Թաթուլ Մ. Վ. Դուրեան ներկայացաւ ժողովին և տեղեկութիւն տուաւ Գոնիայի վիճակին կաղմակերպութեան և տեղական գործոց մասին: Ժողովը գոն եղաւ իր ստանալով աշխատութիւններէն և հրահանգ տուաւ մեկնել Պիլէհիկ:— Պիլէհիկէ Տ. Յովսէփ

եպս. Սարաճեան գրով մը կը ծանուցանէր թէ Վանայ Գաւառ. տեղաբնիկներն ինքրանաւ նաց վրայ և Վեհ. Հայրապետին հրամանին համաձայն կը ստանձնէ Վանայ հոգևոր հովուութեան պաշտօնը: Ժողովը գոն եւգաւ Ն. Սրբազնութեան այս բարեյօժար տրամադրութեան համար և յանձնեց իր Ս. Նախագահին կարեւոր կարգադրութիւններ ընել ճամբու ծախքերուն մասին:— Արդէնքի Թաղ. խորհուրդը կը ծանուցանէր թէ տեղւոյն եկեղեցւոյ շինութիւնէն գեո 5000 Փր. ի տոկոսաւոր պարտք մը կը մնայ և թէ ասկէ առաջ արտօնուած հանգանակութեան տոմարը տրուած չէ: Ժողովը տեղեկանալով որ այդ հանգանակութեան յապաղումը առաջ եկած է Տ. Երկմիա վրդ. Լիֆօրեանի Երուսաղէմ մեկնելէն, որոշեց յանձնարարել Թաղ. խորհուրդին՝ ներկայացուցիչ մը կարգել իր կողմէն՝ ստանալու համար ժապաւնեալ տոմարը:— Ֆէնէսէն ուղղուած գրերէ տեղեկանալով որ Մեսրոպ վրդ. Ամատունի կը շարունակէ մնալ նոյն գիւղաքաղաքը և գժտութիւնները կը շարունակուին, որոշեց հեռագրել իրեն անմիջապէս վերադառնալ Սիս:— Լնդուսեց Տ. Մեսրոպ վրդ. Նարոյեանի հրաժարականը եւգոկիոյ առաջնորդութիւնէն:— Ժողովը չընդունեց Տ. Պապ վրդ. ի հրաժարականը և որոշեց հեռագրել որ վերադառնալ Բգի և շարունակէ իր պաշտօնը:— Որոշեց կայսկոպտական ձեռնադրութեան վկայական տալ Կարնոյ Առաջնորդ Տ. Սմբատ վրդ. ի:— Հաստատեց Պանտրմայի Թաղ. ժողովին ընտրութիւնը:

ԱՏԱՆԱՅԻ կուսակալը հեռագրած է Դատ. նախարարութեան թէ Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը՝ որ նախապէս պատճառաբանեալ հրաժարական մատուցած էր, այժմ ետ առած է հրաժարականը՝ կուսակալին կողմէ իրեն տրուած հաւաստիքներուն և բարեացակամ ընթացքին հետեւանքով:

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՀՄԱՅՆԱԿ ԳԶՆՅ. ԷԿՍԷԻՐԱՅԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՀԱՐՄԱՅՐ ԳԶՆՅ. ԿԷԶԻՐԱՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

Զաւմաֆճըլար, Յակոբեան խան

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.


THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.



ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՏՈՀՄԱՅԻՆ ԱՅԳԱՂՈՅՍ, Արշակունի Օրիորդին Արկածները. գրեց Մեսրոպ Վ. Ուղուրլեան. — Վիպասանութիւն հմտալից տեղեկութիւններով, և հետաքրքրաշարժ ու մերթ զուարճալի պարունակութեամբ, գնահատուած Հայ-հոռոմէականաց նախորդ Կ. Պատրիարք Տ. Պօղոս-Պետրոս ԺԱ. է: Գին 20 ղրշ.:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ, Կազմեց Վ. Գ. Զարդարեան. — Հրատարակուեցաւ երկրորդ հատորին Ա. տետրը (պրակ ԺԳ.): Կը խօսուի Գր. Շղթայակրի, Ստեփան փափազեանի և ուրիշ հին ու ժամանակակից նշանաւոր դէմքերու մասին: Գին 2 ղրշ.:

ԻՍԼԱՄՈՒԹԵԱՆ ՄԱՐԳԱՐԷՆ ՄԱՀՄԷՏ

Իմաստասիրական գործ Թ. Քարլայլ անգլիացիին: Գին 5 ղրշ.: Կը ծախուի Պալինց, Սիւնեաց և Աշտնի գրատունները:

Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ

Գ Ո Ր Ծ Ե Ր Է Ն

Հիւ Օրեւ և Պուէտ Խաչատուր Միսաքեան, գին 7ու կէս ղրշ.:

19րդ դար, Յովն. Պրուսացի Տերոյեանց, գին 12ու կէս ղրշ.:

Ստուերֆ հին դէմքերու, տաճանակ, գին 5 ղրշ.:

Թրքահայ հիւ վաճառականութիւն և վաճառականք, գին 10 ղրշ.:

Այդուրիս, տաճանակ իմաստասիրական, 7 ղրշ.:

Պատմութիւն Թուրքահայոց (Գ. Բաժանորդագրութիւն) մէկ բաժին 30 ղրշ.:

ՏԳԹ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

ՈՒՐՈՒԱԳԻԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ, Ի սկզբանէ մինչ ցԱրշակունի Հարսուքեան: Բ. Տպագր. Վենետիկ: Գին 5 ղրշ.:

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԿՐՕՆՆԵՐԸ, Բ. Տպագր. Կ. Պոլիս. — Գին 6 ղրշ.:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԽՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԽՍՈՒԹԻՒՆ. — Ազգ. վարժարանաց համար պատրաստուած դասագիրք մը: 128 էջ, 55 կազմախօսական ընտիր պատկերներ: Գին 5 ղրշ.:

“ARMENIA”

Անգլիերէն ամսագիր, որ գեղեցիկ ու իրապէս օգտակար նպատակն ունի առանց կուսակցական շահերու ծանօթացնել Հայ յութիւնը՝ Ամերիկայի, և պաշտպանել Հայ ազգին պատիւն ու շահերը: Ասկէ առաջ կը հրատարակուէր ի Պոսթըն, այժմ կը շարունակուի Նիւ-Եորք, խմբագրութեամբ Ամերիկայի ամէնէն աչքառու գրողներու: Տարեկան բաժնեգին՝ Ամերիկայի համար՝ 1 տոլար, Թուրքիոյ 30 ղրշ.: Հասցէ՝ Editor of «Armenia», NEW-YORK, 33 Union Square.

Պատ. հեղինակներն և հրատարակիչներն եթէ կ'ուզեն իրենց գործերը ծանուցուած տեսնել Տաճարին մէջ, պէտք է խմբագրութեան ղրկեն երկերկու օրինակ այդ գործերէն, որոնց վրայ ի հարկին պիտի խօսուի մասնաւոր գրախօսականով: